Ընտանիքի Գործավորներ

Բովանդակություն

Արդյո՞ք տնային տնտեսությունում ներգրավված բոլոր աշխատողներն ապահովագրված՝են	2
Սոցիալական ապահովության և Medicare -ի հարկերի գանձում՝	2
Հարկերի վճարում Հարկային Վարչությանը՝ (IRS)	2
Աշխատավարձի տեղեկագրում Սոցիալական Ապահովությանը՝	3
Ինչպես է Ձեր տնային տնտեսության աշխատողը Սոցիալական ապահովության միավոր վաստակում՝	3
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	4

Արդյո՞ք մտադրված եք մաքրուհուն, խոհարարին, այգեգործին, դայակին կամ տնային տնտեսության այլ ծառայողին վճարել առնվազն $2,000 2017 թվականին: Ընդհանուր գումարի մեջ նույնպես ներառեք ցանկացած կանխիք գումար, որը Դուք վճարում եք Ձեր աշխատողների փոխադրամիջոցի, սննդի և բնակարանային պայմանների համար: Եթե մեկ անձին վճարում եք առնվազն $ 2,000, ապա ստանձնում եք որոշակի պարտավորություններ:

Այդ պարտավորությունների կատարման շնորհիվ Ձեր աշխատողները կստանան միավորներ [կրեդիթ-վարկեր] Սոցիալական ապահովության նպաստների և Medicare-ի ապահովագրության ծածկույթի համար: Ձեր տնային տնտեսությունում ներգրավված աշխատողներին առնվազն $ 2,000 աշխատավարձ վճարելիս, Դուք պարտավոր եք՝

- Գանձել Սոցիալական ապահովության և Medicare -ի հարկերը վճարվող աշխատավարձից;
- Վճարել այդ հարկերը Հարկային Վարչությանը (Internal Revenue Service, IRS); և
- Տեղեկագրել աշխատավարձը Սոցիալական Ապահովության ծառայությանը:

(շրջել)

Յուրաքանչյուր $ 2,000 աշխատավարձի համար տնային տնտեսության աշխատողներից շատերը ստանում են ապահովագրության քարորդ մասը՝ Սոցիալական ապահովության նպաստների և Medicare-ի ապահովագրության ծածկույթի դիմաց: Սովորաբար մարդկանց անրաժեշտ է 10 տարվա ապահովագրության ծածկույթ ունենալ հետևյալ իրավասությունները ստանալու համար՝

- Կենսաթոշակային նպաստներ (62 տարեկանից սկսած);
- Հաշմանդամության նպաստներ՝ աշխատողի և աշխատողի խնամարկյալների համար;
- Ժառանգորդի նպաստներ՝ աշխատողի ընտանիքի անդամների համար; և
- Medicare -ի նպաստներ:

Արդյո՞ք տնային տնտեսությունում ներգրավված բոլոր աշխատողներն ապահովագրված՝են

Ստորև ներկայացված իրավիճակներում կիրառվում են հատուկ կանոններ՝

- Տեղեկագրե՛ք բոլոր աշխատավարձերը, եթե գործարկում եք հյուրանոց, պանսիոնատ կամ վարձակալությամբ հանձնում կահավորված սենյակներ:
- Մի՛ վճարեք Սոցիալական Ապահովության հարկերը 18 տարեկանից ցածր դայակների կամ այլ աշխատողների համար, բացառությամբ այն դեպքերի, եթե դա հանդիսանում է վերջիններիս առաջնային աշխատանքը:
- Եթե վարձատրում եք Ձեր 21 և բարձր տարիքի երեխաներին տնային աշխատանքների կատարման համար, ապա վճարե՛ք Սոցիալական Ապահովության հարկերը նրանց աշխատավարձից:
- Եթե վարձատրում եք Ձեր ծնողներից մեկին կամ երկուսին տնային աշխատանքների կատարման համար, ապա նրանց աշխատավարձերը պետք է հարկվեն, և Դուք պետք է պարզեք, թե արդյո՞ք տվյալ հարկման կանոնները կիրառելի են նրանց դեպքում:

Լրացուցիչ տեղեկատվության համար դիմեք Սոցիալական Ապահովության ցանկացած գրասենյակ:

Սոցիալական ապահովության և Medicare -ի հարկերի գանձում՝

Որպես գործատու, Դուք վճարում եք 6.2 տոկոս Սոցիալական Ապահովության հարկ Ձեր աշխատողների կողմից վաստակած մինչև $ 127,200 հասույթի դեպքում (2017 թ-ին) և 1.45 տոկոս Medicare–ի հարկ՝ բոլոր վաստակած գումարների համար: Գործատուն վճարում է հարկերի նույն տոկոսադրույքը, ինչպես նաև հավելյալ 0.9 տոկոս Medicare –ի հարկի մասով՝ $ 200,000 գերազանցող հասույթի դեպքում ($ 125,000 ՝ ամուսնացած լինելու բայց առանձին ներկայացնելու, կամ $ 250,000՝ ամուսնացած լինելու և համատեղ ներկայացնելու դեպքում):

Հարկերի վճարում Հարկային Վարչությանը՝ (IRS)

Դիմեք Հարկային վարչությանը տեղեկագրման պահանջների կամ ձևաթղթերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար: Վարչության աշխատակիցները Ձեզ կտեղեկացնեն, ինչպես լրացնել ձևաթղթերը, ինչպես նաև երբ և որտեղ ներկայացնել դրանք: Ծանոթացեք նաև Հարկային Վարչության թիվ 926 հրատարակությանը՝ «Տնային տնտեսությունում զբաղված աշխատողների հարկային ուղեցույց» (IRS Publication 926, Household Employer’s Tax Guide), որը կարող եք գտնել ***www.irs.gov/publications/p926/index.html*** կայքէջում՝ Ձեզ անհրաժեշտ ձևաթղթերի տեսակների և ներկայացման ժամկետների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար:

(շրջել)

Տեղեկատվություն, որը կարող է Ձեզ հետաքրքրել՝

- **Հաշվառման վարում.** գրանցեք Ձեր տնային տնտեսությունում զբաղված բոլոր աշխատողների անունները, հասցեները և Սոցիալական Ապահովության համարները, և նրանց վճարվող աշխատավարձերի գումարի չափը: Սոցիալական Ապահովության համարը անմիջապես պատճենեք յուրաքանչյուր անձի Սոցիալական ապահովության քարտից: Եթե Ձեր աշխատողներից որևէ մեկը չունի Սոցիալական Ապահովության քարտ, ապա նա պետք է դիմի Սոցիալական Ապահովության ցանկացած գրասենյակ՝ այն ստանալու համար:
- **IRS ձևաթղթերի ներկայացում և հարկված աշխատավարձեր.** օգտագործեք Ձեր դաշնային հարկային հայտարարագիրը (IRS ձևաթուղթ 1040)՝ տնային տնտեսության աշխատողներին $2,000 կամ ավել չափով Ձեր կողմից վճարված աշխատավարձերը տեղեկագրելու նպատակով: Որպես գործատու՝ վճարեք Սոցիալական Ապահովության և Medicare-ի հարկերի Ձեր մասնաբաժինը: Ինչպես նաև վճարեք այն հարկերը, որոնք գանձում եք աշխատողների աշխատավարձից:

Աշխատավարձի տեղեկագրում Սոցիալական Ապահովությանը՝

Ձեր տնային տնտեսության աշխատողի IRS W-2 ձևաթղթի B, C և 2 կրկնօրինակները (*Wage and Tax Statement*, *Աշխատավարձի և հարկերի հաշվեցույց*) պետք է հանձնեք մինչև հունվարի 31-ը՝ *Transmittal of Wage and Tax Statements* աշխատավարձը վճարվելու տարվանից հետո: W-2 ձևաթղթի A պատճենը W-3 ձևաթղթի հետ ուղարկեք (Աշխատավարձի և հարկերի հաշվեցույցի փոխանցում) Սոցիալական ապահովության ծառայությանը՝ մինչև հունվար ամսվա վերջին օրը, եթե ներկայացնում եք էլեկտրոնային տարբերակով կամ թղթային տարբերակով՝ աշխատավարձի զեկուցման տարվան հաջորդող տարում: Այս ձևաթուղթը և այն լրացնելու մասին ցուցումները կարող եք ստանալ Հարկային վարչության (IRS) ցանկացած գրասենյակից: Եթե ունեք անձնական համակարգիչ ինտերնետի մուտքի հնարավորությամբ և տպիչ սարք, ապա կարող եք օգտվել *W-2 Online* տարբերակից: *W-2 Online* առցանց տարբերակը Սոցիալական ապահովության ծառայության փաստաթղթերի անվճար էլեկտրոնային ներկայացման տարբերակն է գործատուների համար: *W-2 Online*-ի միջոցով դուք կարող եք մուտք ունենալ W-2 ձևաթղթի էլեկտրոնային տարբերակին, լրացնել այն և ներկայացնել Սոցիալական ապահովության ծառայությանը ինտերնետի միջոցով: Ծառայության միջոցով կարող եք նույնիսկ ձեզ համար լրացնել W-3 ձևաթուղթը (փոխանցում): Դուք կարող եք նաև տպել կրկնօրինակներ, որոնք անհրաժեշտ են ձեր աշխատողին(ներին)՝ իրենց հարկերը ներկայացնելու համար, կամ տպել կրկնօրինակներ ձեր սեփական պահպանության համար:

Առաջին հերթին գրանցվեք Օգտատերի ID և գաղտնաբառ ստանալու համար Business Services Online կայքում՝***www.socialsecurity.gov/bso/bsowelcome.htm:*** Լրացուցիչ տեղեկատվության, ինչպես նաև քայլ առ քայլ հրահանգների համար հետևեք ***www.socialsecurity.gov/employer/bsohbnew.htm*** կայքէջին:

Ինչպես է Ձեր տնային տնտեսության աշխատողը Սոցիալական ապահովության միավոր վաստակում՝

Տնային տնտեսության հետ կապված աշխատանքի համար միավորները շնորհվում են մի փոքր այլ կարգով, համեմատած մյուս աշխատանքների հետ: Սովորաբար անձը վաստակում է մեկ միավոր յուրաքանչյուր $1,300 չափով տեղեկագրված հասույթի դիմաց (2017 թ-ին), մինչև առավելագույնը չորս միավոր մեկ տարվա ընթացքում:

(շրջել)

Այնուամենայնիվ, տնային տնտեսության աշխատողը կվաստակի Սոցիալական Ապահովության միավորը միայն յուրաքանչյուր գործատուից նվազագույնը 2,000 ԱՄՆ դոլարի չափով հասույթի դիմաց: Օրինակ՝ տնային տնտեսության աշխատողը, որն աշխատում է 3 գործատուների համար և վճարվում է $ 900, $1,100 և $ 2,000 համապատասխանաբար (ընդհանուր $ 4,000), կվաստակի միայն մեկ Սոցիալական Ապահովության միավոր իր $2,000 դիմաց, որը կհրապարակվի իր Սոցիալական Ապահովության հաշվառման մեջ:

Որքան միավորներ են անհրաժեշտ աշխատողներին (ներառյալ տնային տնտեսության աշխատողներին) Սոցիալական Ապահովության նպաստների իրավասություն ձեռք բերելու համար, կախված է նրանց տարիքից և նպաստի տեսակից, որոնց նրանք կարող են իրավասու լինել: Մարդկանցից շատերին անհրաժեշտ է 10 տարվա աշխատանքային փորձ (40 միավոր)՝ նպաստ ստանալու իրավասություն ունենալու համար: Ավելի երիտասարդները, որպեսզի ձեռք բերեն հաշմանդամության նպաստների, կամ աշխատողի մահվան դեպքում ընտանիքի անդամների համար նախատեսված ժառանգորդի նպաստների իրավասություն, ավելի քիչ միավորների կարիք ունեն:

Հիշեք, եթե Դուք չտեղեկագրեք Ձեր աշխատողների աշխատավարձերը, հնարավոր է նրանք չվաստակեն բավարար միավորներ Սոցիալական ապահովության նպաստներ ստանալու համար, կամ նպաստի գումարը կարող է ավելի քիչ լինել:

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

Այցելե՛ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնեություն վարելու ամենհարմար եղանակը դա մեր՝ ***www.socialsecurity.gov*** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության հաշվետվությունը*) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Նշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը) ՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնեությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ

(շրջել)

նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (Ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Զանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ: